ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի դիրքը միջազգային վարկանիշներում և ինդեքսներում» 2025

Ամփոփ նկարագիր՝ Հայաստանի դիրքը միջազգային ինդեքսներում և վարկանիշներում

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարկանիշ/ինդեքս	2020	2021	2022	2023	2024	2025
Moody's վարկանիշ	Ba3	Ba3	Ba3	Ba3	Ba3	Ba3
Fitch վարկանիշ	BB-	B+	B+	BB-	BB-	BB-
S&P Global վարկանիշ	B+	B+	B+	BB-	BB-	BB-/B
Տնտեսական ազատության համաթիվ	34/180	32/178	58/177	50/176	47/184	57/184
Գլոբալ նորարարության համաթիվ	61/131	69/132	80/132	72/132	63/133	59/139
Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման համաթիվ	N/A	61/117	N/A	N/A	72/119	TBD
Բարգավաճման համաթիվ- Legatum	59/167	54/167	59/167	61/167	TBD	TBD
Տնտեսական բարդության համաթիվ	75/130	72/132	67/131	57/132	TBD	TBD
Կոռուպցիայի ընկալման համաթիվ	60/180	58/180	63/180	62/180	63/180	TBD

Fitch վարկանիշ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Fitch-ը պահպանել է Հայաստանի «BB-» վարկանիշը, որն արտացոլում է՝

- բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտը,
- կայուն մակրոտնտեսական քաղաքականության շրջանակը,
- աճի կայուն հեռանկարները,
- կառավարման չափավոր ցուցիչները,
- համանման երկրների համեմատ բյուջեի դեֆիցիտի բարձր ցուցանիշը,
- արտաքին ֆինանսավորման ցածր մակարդակը,
- ֆինանսական հատվածի դոլարիզացման բարձր մակարդակը,
- աշխարհաքաղաքական ռիսկերը:

Չափավոր աճ

Կանխատեսվում է, որ Հայաստանի տնտեսական աճը 2025 թվականին կկազմի մոտ 5%, իսկ 2026–2027 թվականներին՝ մինչև մոտ 4.7%, քանի որ կնվազի աճի վրա միգրացիայի, վերաարտահանման և փախստականների հոսքի ժամանակավոր ազդեցությունը:

Ամուլսարի ոսկու հանքի գործարկումը, որը սպասվում է 2025 թվականի 4-րդ եռամսյակում, կարող է ապահովել միջնաժամկետ աճ:

Կանխատեսվում է, որ բյուջեի դեֆիցիտը 2025 թվականին կընդլայնվի՝ պաշտպանության, սոցիալական և կապիտալ ծախսերի աճի պատճառով, մինչ միջնաժամկետում ծախսերի աստիճանական չափավորումը:

Fitch վարկանիշ Հայաստան 2025

Տարի	Վարկանիշ
2015	B+
2016	B+
2017	B+
2018	B+
2019	BB-
2020	BB-
2021	B+
2022	B+
2023	BB-
2024	BB-
2025	**BB-**

Moody's վարկանիշ

Վերջին թարմացումը՝ 12.12.2025թ.

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Moody's –ը վերահաստատել է Հայաստանի վարկունակության **«Ba3 կայուն» վարկանիշը**, ինչը ցույց է տալիս, որ Հայաստանի վարկունակությանը սպառնացող ռիսկերը մնում են հավասարակշռված:

Հայաստանի Ba3 վարկանիշի գնահատումը հիմնված է տնտեսական աճի միջնաժամկետ կայուն ներուժի (մոտ 5%), արտադրողականության բարելավման միտումների և չափավոր ուժեղ ինստիտուտների և կառավարման վրա: Կանխատեսվում է, որ 2022 թվականից հետո գրանցված բարձր ցուցանիշների համեմատ տնտեսական աճը կդանդաղի մինչև ներուժային աճի մակարդակ:

Վարկանիշի բարձրացման սցենար

Կառավարության պարտքի բեռի և պարտքի կայուն և էական բարելավում, որն աջակցվում է ավելի արագ հարկաբյուջետային կոնսոլիդացիայի, ավելի ուժեղ հարկային վարչարարությամբ և վարկային ծախսերի նվազեցմամբ:
Կայուն կառուցվածքային բարեփոխումներ, որոնք զգալիորեն բարձրացնում են արտադրողականությունը, մրցունակությունը և երկարաժամկետ աճի ներուժը՝ գերազանցելով ներկայիս սպասումները: Աշխարհաքաղաքական ռիսկերի նշանակալի և երկարաժամկետ կրճատում՝ ներառյալ Ադրբեջանի հետ համապարփակ խաղաղության համաձայնագիրը:

Վարկանիշի իջեցման սցենար

Աշխարհաքաղաքական կամ քաղաքական լարվածության սրացում, որը էականորեն կխոչընդոտի քաղաքականությունների մշակմանը և զգալիորեն կթուլացնի տնտեսական և հարկաբյուջետային հեռանկարները: Տնտեսական աճի և հարկաբյուջետային ցուցանիշների զգալի վատթարացում, որը հնարավոր է պայմանավորված լինի անբարենպաստ աշխարհաքաղաքական զարգացումներով, ինչը դանդաղեցնում է հիմնական գործընկերների հետ արտաքին առևտուրը և նվազեցնում են արտաքին պահանջարկը:

Moody's վարկանիշ, Հայաստան 2025

Տարի	Վարիկանիշ
2015	Ba3
2016	B1
2017	B1
2018	B1
2019	Ba3
2020	Ba3
2021	Ba3
2022	Ba3
2023	Ba3
2024	Ba3
2025	**Ba3**

Standard & Poor Global վարկանիշ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերջին թարմացումը 25.08.2025թ.

S&P Global Ratings-ը վերահաստատել է Հայաստանի «BB-/B» սուվերեն վարկային վարկանիշը՝ կայուն հեռանկարով

Հեռանկարոմ արտացոլում է Հայաստանի դեռևս կայուն տնտեսական աճի ներուժի և չափավոր պետական պարտքի բեռի միջև հավասարակշռությունը՝ վճարային հաշվեկշռի և տարածաշրջանային աշխարհաքաղաքական ռիսկերի բարձրացման պայմաններում: Կանխատեսվում է, որ տնտեսական աճը կկայունանա, քանի որ ռուսական աշխատուժի, դրամական փոխանցումների և կապիտալի ներհոսքի ժամանակավոր ազդեցությունը կնվազի, մինչդեռ բյուջեյի դեֆիցիտը, կանխատեսվում է, որ մոտ ապագայում կմեծանա՝ պաշտպանության, ենթակառուցվածքների և փախստականների հետ կապված ծախսերի աճի պատճառով: Կանխատեսվում է, որ 2026 թվականի ընթացքում տնտեսական աճը և բյուջեի դեֆիցիտը կկայունանան:

Վարկանիշի բարձրացման սցենար

S&P-ն կարող է դիտարկել վարկանիշի բարձրացման սցենար, եթե Հայաստանի պետական ֆինանսները և արտաքին պահուստերը գերազանցեն ներկայիս կանխատեսումները, այդ թվում՝ ավելի ուժեղ հարկաբյուջետային կոնսոլիդացիայի, արտաքին գործոններից կամ տարածաշրջանային աշխարհաքաղաքական ռիսկերից կախվածության թուլացման դեպքում, ինչը կբարելավի ներդրումային վստահությունը:

Վարկանիշի իջեցման սցենար

Վարկանիշը կարող է նվազել, եթե հարկաբյուջետային կամ արտաքին

Standart & Poor Global վարկանիշ Հայաստան 2025

Տարի	Վարկանիշ
2021	B+
2022	B+
2023	BB-
2024	BB-
2025	**BB-/B**

Տնտեսական ազատության համաթիվ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ազատության համաթիվ Հայաստան 2025

Տարի	Դիրք	Միավոր
2019	47	67.7
2020	34	70.6
2021	32	71.9
2022	58	65.3
2023	50	65.1
2024	47	64.9
2025	57	65.4

Հրապարակում է Heritage Foundation կազմակերպությունը

Տնտեսական ազատության ինդեքսը չափում է տնտեսական ազատությունը՝ հիմնվելով 12 քանակական և որակական գործոնների վրա, որոնք խմբավորված են տնտեսական ազատության հետևյալ չորս հենասյուներում:

- **Օրենքի գերակայություն** (սեփականության իրավունք, կառավարության բացվածություն, դատական արդյունավետություն):
- **Կառավարության չափ** (կառավարության ծախսեր, հարկային բեռ, ֆինանսական առողջություն):
- **Կարգավորման արդյունավետություն** (բիզնեսի ազատություն, աշխատանքային ազատություն, դրամավարկային ազատություն):
- **Շուկաների բացվածքություն** (առևտրի ազատություն, ներդրումային ազատություն, ֆինանսական ազատություն):

Գլոբալ նորարարության համաթիվ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գլոբալ նորարարության համաթիվ Հայաստան 2025

Հրապարակում է մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (WIPO)

Գլոբալ նորարարության ինդեքսը (ԳԻԻ) չափում է նորարարության զարկերակը՝ տնտեսական և աշխարհաքաղաքական անորոշությամբ լի միջավայրի ֆոնին:

Այն բացահայտում է աշխարհի ամենանորարարական տնտեսությունները, դասակարգում մոտ 139 տնտեսությունների նորարարական կատարողականը՝ ընդգծելով նորարարության ուժեղ և թույլ կողմերը:

ԳԻԻ-ն կազմված է երեք ինդեքսներից՝ ընդհանուր ԳԻԻ, նորարարության մուտքի ենթաինդեքս և նորարարության արդյունքի ենթաինդեքս:

Նորարարության մուտքի ենթաինդեքսը բաղկացած է հինգ հենասյուներից՝ (հաստատություններ, մարդկային կապիտալ և հետազոտություն, ենթակառուցվածքներ, շուկայի բարդություն, բիզնեսի բարդություն):

Նորարարության արդյունքի ենթաինդեքսը տեղեկատվություն է տրամադրում տնտեսությունների նորարարական գործունեության արդյունքների մասին: Կան երկու արդյունքի հենասյուներ՝ գիտելիքների և տեխնոլոգիաների արդյունքներ ու ստեղծագործական արդյունքներ:

Տարի	Դիրք	Միավոր
2019	64	33.98
2020	61	32.64
2021	69	31.4
2022	80	26.6
2023	72	28.0
2024	63	30.5
2025	59	30.4

Ճանապարհոր-դության և զբոսաշրջության զարգացման համաթիվ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման համաթիվ Հայաստան2024

Հրատարակվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից՝ Սուրեյի համալսարանի հետ համատեղ

Համաթիվը չափում է այն գործոնների և քաղաքականությունների ամբողջությունը, որոնք ապահովում են ճանապարհորդության և զբոսաշրջության կայուն զարգացումը:

Համաթիվը բաղկացած է հինգ չափորոշիչներից (բարենպաստ միջավայր, ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի քաղաքականություն և բարենպաստ միջավայր, զբոսաշրջության և ճանապարհորդության ռեսուրսներ, զբոսաշրջության և ճանապարհորդության կայունություն), 17 հիմնական ցուցիչներից և 102 առանձին ցուցանիշներից, որոնք բաշխված են ըստ հիմնական ցուցիչների:

Տարի	Դիրք	Միավոր
2017	84	3.53
2019	79	3.7
2021	61	4.0
2024	72	3.73

Կոռուպցիայի ընկալման համաթիվ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրապարակվում է Transparency International կազմակերպության կողմից

Transparency International կազմակերպությունը դասակարգում է 180 երկրները և տարածքները՝ ելնելով պետական հատվածում ենթադրվող կոռուպցիայի մակարդակից և գնահատում է դրանք 0-ից (բարձր կոռումպանցված) մինչև 100 (ցածր կոռուպանցված) սանդղակով:

2024 թվականին արդարադատության համակարգերի թուլացման համաշխարհային միտումը նվազեցնում է պետական պաշտոնյաների հաշվետվողականությունը, ինչը թույլ է տալիս կոռուպցիայի ծաղկմանը:

Վերջին ԿԸՀ-ի համաձայն Հայաստանը դասվում է «Նշանակալի բարելավողներ» կատեգորիայում. «2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո երկու տարիների ընթացքում Հայաստանը (47) զգալի ժողովրդավարական և կոռուպցիայի դեմ պայքարի բարեփոխումներ է իրականացրել:

Չնայած տարածաշրջանի շատ երկրների նման անվտանգության մարտահրավերներին բախվելուն՝ Հայաստանն ունի նման դժվարությունների հաղթահարման և ուժեղ քաղաքականությունը կոռուպցիայի ավելի լավ վերահսկողության վերածելու ներուժ»:

Կոռուպցիայի ընկալման համաթիվ Հայաստան 2024

Տարի	Դիրք	Միավոր
2019	75	42
2020	60	49
2021	57	49
2022	63	46
2023	62	47
2024	63	47